ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

19 փետրվարի 2025 թվականի N 123 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 05-Ի N 204-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով՝

որոշում եմ.

1. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետի 2023 թվականի հունիսի 05-ի «Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի «Ակների միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունը Գաբրիել Խաչատրյանի անունով անվանակոչելու և կազմակերպության կանոնադրության փոփոխությունը հաստատելու մասին» N 204-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը՝ որոշման 2-րդ կետի 2-րդ ենթակետը շարադրել նոր խմբագրությամբ՝

«2) Կազմակերպության կանոնադրության 1. Ընդհանուր դրույթներ գլխի 6-րդ կետը շարադրել հետևյալ նոր խմբագրությամբ.

«6. Դպրոցի անվանումն է՝

1) հայերեն լրիվ՝ ՀՀ Սյունիքի մարզի «Ակների Գաբրիել Խաչատրյանի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպություն.

2) հայերեն կրճատ՝ ՀՀ Սյունիքի մարզի «Ակների Գաբրիել Խաչատրյանի անվան միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ.

3) ռուսերեն լրիվ՝ «Акнерская средняя школа имени Габриеля Хачатряна» Сюникской области РА государственная некоммерческая организация.

4) ռուսերեն կրճատ՝ «Акнерская средняя школа имени Габриеля Хачатряна» Сюникской области РА ГНО.

5) անգլերեն լրիվ՝ «Akner secondary school after Gabriel Khachatryan» Syunik region of RA State Non Commercial Organization.

6) անգլերեն կրճատ՝ «Akner secondary school after Gabriel Khachatryan» Syunik region of RA SNCO:»:

Recoverable Signature

X

2025-02-19 15:28:30 GMT+4
Կատարողական է ՀԱՆՐԱՊԵՏԻՆ նույնից

Signed by: GHUKASYAN ROBERT 3712800290

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ռ. ՂՈՒԿԱՍՅԱՆ

2025 թ. փետրվարի 19
ք. Կապան